

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն համաձայնագրով սահմանվում են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) աշխատողներին և ուսանողներին ֆինանսական աջակցության տրամադրման կարգը, պայմանները և չափերը:

II. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2. Համալսարանի աշխատողներին (Արհեստակցական կազմակերպության անդամ հանդիսացող) ֆինանսական աջակցություն տրամադրվում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպության (այսուհետ՝ Արհեստակցական կազմակերպություն) արհկոմիտեի որոշման հիման վրա:

3. Միանվագ ֆինանսական աջակցություն տրամադրվում է հետևյալ դեպքերում և կարգով.

1) աշխատողի ընտանիքի անդամի (ծնող, ամուսին, երեխա) մահվան դեպքում: Աշխատողին հատկացվում է հիսուն հազար ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն, վերջինիս անմիջական ղեկավարի՝ Արհեստակցական կազմակերպության նախագահին ուղղված դիմումի և կից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:

2) աշխատողի մահվան դեպքում՝ աշխատողի ընտանիքի անդամներից մեկին (ծնող, ամուսին, երեխա) տրամադրվում է ֆինանսական աջակցություն հարյուր քսան հազար ՀՀ դրամի չափով՝ Արհեստակցական կազմակերպության նախագահին ուղղված մահացած աշխատողի անմիջական ղեկավարի դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:

3) այլ դեպքերում՝ Արհեստակցական կազմակերպության նախագահին ուղղված աշխատողի դիմումի հիման վրա՝ Արհեստակցական կազմակերպության արհկոմիտեի որոշմամբ սահմանված չափով: Սույն ենթակետով սահմանված դեպքերում տրամադրվող ֆինանսական աջակցության նվազագույն և առավելագույն չափերը, մեկ տարվա ընթացքում հատկացվելիք ֆինանսական

աջակցության առավելագույն չափը, դեպքերը և հիմքերը սահմանվում են Արհեստակցական կազմակերպության արհկոմիտեի կողմից:

4. Սույն համաձայնագրի 3-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի դեպքում ֆինանսական աջակցությունը փոխանցվում է աշխատողի բանկային հաշվեհամարին, իսկ 2-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ տրամադրվում է ստացականի հիման վրա՝ կանխիկ՝ աշխատողի ընտանիքի անդամին:

III.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Ուսանողներին ֆինանսական աջակցություն տրամադրվում է, որպես կանոն, այն դեպքերում, երբ վերջիններս չեն ստանում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

6. Սույն համաձայնագրով սահմանված ֆինանսական աջակցություն տրամադրվում է միայն սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին:

7. Ուսանողներին ֆինանսական աջակցության դեպքերի և պայմանների քննարկման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է հանձնաժողով: Ուսանողներին ֆինանսական աջակցություն տրամադրվում է հանձնաժողովի նախագահին ուղղված ուսանողի դիմումի կամ ուսանողական խորհրդի նախագահի միջնորդագրի հիման վրա (ուսանողի համաձայնությամբ)՝ հանձնաժողովի որոշման հիման վրա: Հանձնաժողովը սահմանում է այն դեպքերը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է ներկայացվեն դիմումի հետ միասին:

8. Յուրաքանչյուր ուսանողին, որպես կանոն, ֆինանսական աջակցություն տրամադրվում է տարեկան մեկ անգամ: Ֆինանսական աջակցության նվազագույն չափը երեսուն հազար ՀՀ դրամ է, իսկ առավելագույն չափը՝ հիսուն հազար ՀՀ դրամ :

9. Ուսանողներին ֆինանսական աջակցություն տրվում է կանխիկ կամ անկանխիկ՝ ուսանողի բանկային հաշվին փոխանցման միջոցով:

10. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
Արհեստակցական կազմակերպություն

ՌԵԿՏՈՐ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐՁԱԽԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

„20,, մարտի 2014թ.

„20,, մարտի 2014թ.